ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2018թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ակադեմիկոս Սեն Արևշատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Ավագ Պետրոսյան փողոց հ. 2 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ակադեմիկոս Սեն Արևշատյանը ծնվել է 1928թ. Երևանում: 1951թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1951-1954թթ. ՀՀ ԳԱ ասպիրանտուրայում մասնագիտացել է հայ հին և միջնադարյան փիլիսոփայության պատմության մեջ:

1954-1959թթ. եղել է ՀՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի բաժնի գիտաշխատող: 1959թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր հին ձեռագրերի նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտում՝ Երևանի Մատենադարանում՝ որպես սկզբնաղբյուրների գիտական թարգմանության բաժնի վարիչ:

1972թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1973թ. ղեկավարել է Մատենադարանի հին բնագրերի ուսումնասիրության և հրապարակման բաժինը: 1982-2007թթ. եղել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի տնօրենը, 2007-2014թթ.՝ Մատենադարանի կառավարման խորհրդի նախագահը, 1958-60թթ., համատեղության կարգով, եղել է ՀՀ ԳԱ պատմաբանասիրական հանդեսի պատասխանատու քարտուղարը, 1972-1979թթ.՝ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող: 1975-1978թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում, որտեղ մինչև 2014թ. եղել է գիտաթեմատիկ խմբի գիտական ղեկավարը: 1982թ. ընտրվել է ՀՀ ԳԱ թղթակից անդամ, 1996թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Հեղինակել է ավելի քան 150 գիտական աշխատություններ, այդ թվում 30 մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ, որոնք լույս են տեսել ոչ միայն Հայաստանում, այլև՝ Մոսկվայում, Փարիզում, Վարշավայում, Շտուտգարտում, Սանկտ Պետերբուրգում, Աթենքում, Կահիրեում և այլուր:

1993թ. եղել է Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի, 1995թ. Մոսկվայի Բնական և հումանիտար գիտությունների, 1998թ. Ազգային անվտանգության խնդիրների ուսումնասիրության իսկական անդամ, Եվրոպայի մշակույթի «Պո-Արաքս» ընկերության (Վենետիկ) անդամ, Փիլիսոփայական միջազգային ակադեմիայի իսկական անդամ:

1978թ. արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի, 2001թ.՝ Երևանի պատվավոր քաղաքացու կոչման, 2008թ.՝ Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանի և ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալի, 2010թ.՝ ՀՀ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալի:

Սեն Արևշատյանը մահացել է 2014թ. Երևանում:

Ակադեմիկոս Սեն Արևշատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Ավագ Պետրոսյան փողոց հ. 2 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Մատենադարանի տնօրեն Վ. Տեր-Ղևոնդյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սեն Արևշատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սեն Արևշատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ